

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն կարևորում և ապահովում է իր բոլոր հաճախորդների բանկային գաղտնիք կազմող տվյալների և հաճախորդների անձնական տվյալների պատշաճ պաշտպանությունը «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ISO 27001 տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի ստանդարտի պահանջների համաձայն:

Բանկը երաշխավորում է բանկային գաղտնիք կազմող տեղեկության և հաճախորդների անձնական տվյալների պատշաճ պահպանումը և ներդրել ու մշտապես բարելավում է նման տեղեկությունները պատշաճ պահպանելու համար անհրաժեշտ և տվյալները մշակող համակարգերի բարձր պաշտպանություն ապահովող տեխնիկա-ծրագրային հնարավորությունները և գործարար գործընթացները:

Տեղեկատվական անվտանգության գործառույթի իրականացման շրջանակներում Բանկը ապահովում է ծրագրային ապահովման, ցանցերի և տվյալների կենտրոնների մշակման և շահագործման փուլերում անվտանգությունը, որոնում և բացահայտում է ապարատային և ծրագրային ապահովման խոցելիությունները, կառավարում է հարձակումների և ներխուժումների կանխարգելման համակարգերը, ճանաչում է պոտենցիալ սպառնալիքները կամ խախտման փորձերը, փակում է խոցելիությունները, նախագծում և գործարկում է ներխուժումների դեմ պաշտպանական համակարգեր, միջադեպերին արձագանքման միջոցառումներ և ապահովում դրանց գործարկումը:

Բանկը հաճախորդների հետ գործարք կնքելու կամ գործարար հարաբերություն հաստատելու, ինչպես նաև հաճախորդների ակնկալիքներին համապատասխան նոր պրոդուկտներ և ծառայություններ մշակելու նպատակով իր հաճախորդների անձնական տվյալները մշակում է միայն հաճախորդների/նրա կողմից լիազորված անձի կողմից անձնական տվյալների մշակման գրավոր համաձայնության (այսուհետ՝ Համաձայնություն) տրամադրման դեպքում և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ու կարգով: Հաճախորդների վերաբերյալ անձնական տվյալների մշակման դադարեցումն իրականացվում է տվյալների մշակման նպատակին հասնելու դեպքում, ինչպես նաև հաճախորդի/նրա կողմից լիազորված անձի կողմից Բանկին տրամադրված Համաձայնությունը հետ կանչելու/հրաժարվելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բանկի հաճախորդները իրավունք ունեն ծանոթանալու իրենց անձնական տվյալներին, փոփոխելու դրանք, դրանց մշակումը սահմանափակելու և օրենքով սահմանվող այլ գործողություններ իրականացնելու: Այդ նպատակով անձնական տվյալների սուբյեկտը պետք է գրավոր (այդ թվում՝ փոստի միջոցով) դիմի Բանկի որևէ մասնաճյուղ կամ գլխամասային գրասենյակ: Տվյալ դեպքում Բանկն ընթացք է տալիս հաճախորդի դիմումին 10 աշխատանքային օրվա ընթացքում: